



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ

Այս տարի սեպտեմբերի 20-ին լրանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 13-րդ տարեդարձը:

Փետրվարի 9-ին Գերագույն հոգևոր խորհուրդը, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, մասնավոր նիստ գումարելով, քննության առավ այդ հոբելյանը նշելու հետ կապված միջոցառումներն և հետ խորհրդակցության որոշեց.

1. Խնդրել Վեհափառ Հայրապետին 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը, մեծահանդես շքով սրբալույս մեռոն օրհնել ի մխիթարություն հայ ժողովրդի:

2. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 14-րդ տարեդարձը նշել նույնպես 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օր, արժանավայել հանդիսությամբ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ուրախությունն ունի հրատարակելու ամսագրի սույն համարի 9-րդ էջում պաշտոնական հաղորդագրություն այդ մասին, որպես բարի լուր՝ ի գիտություն և ի ղեկավարություն մեր թեմերին:

Վստահ ենք, որ մեր հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի մեջ արտի բերկրանքով և խանդավառությամբ պիտի ընդունի հայրապետական այդ որոշումն ու հրավերը ու պիտի մասնակցի Մայր Աթոռի կամարների

ներքո սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի ծննդյան և գահակալության հոբելյանական հանդիսություններին:

Սեռոնի օրհնությունը միշտ էլ հանդիսացել է մեր հավատավոր ժողովրդի արտին խոսող ամենանվիրական ու համաժողովրդական, հազվադեպ ու խորհրդավոր տոնակատարություններից մեկը: Այդ պատճառով անուշահոտ յուղի օրհնությունը, մեր եկեղեցու դարերով սրբագործված այդ արտաուշ խորհուրդը, միշտ էլ կատարվել է արժանավայել հանդիսությամբ, հոգևոր մխիթարության սրբազան բավականությամբ, իբր մեր նախնիքներից մեզ ավանդ մնացած հավատքի նվիրականություն, որը շատ խոր տեղ է գրավել մեր ժողովրդի գիտակցության մեջ:

Հին կրոնների պատմության մեջ ևս ծանոթ են յուղի, ձեթի օրհնությունն ու գործածությունը ժողովուրդների հոգևոր կյանքի և ծիսական սովորույթների մեջ. «Ըլղով, խնկով և գինով գուարճանայ սիրտ» (Առակք. ԻԸ 9):

Հատկապես հին ուխտի օրենսդրության մեջ կարևոր տեղ էր հատկացված յուղի օրհնության և կիրամանը: Օծման յուղը որպես նշույթեղեն միջնորդ աստվածային Զորության և Հոգու, ներգործում էր մարդկանց և իրերի վրա. «խոսեցա Տէր ընդ Մովսիսի և ասէ... առ քեզ եղ ձիթեմեաց... և արասցես

զայն եղ յօծումն արքութեան... և օծցես ի նմանէ զխորանն վկայութեան... և արքեպեպս և եղիցի արքութիւն արքոց» (Եւր. 1 22—29): Իսրայելի թագավորներն ու մարգարէները և քահանաները նույնպէս օծվում էին:

Առաքյալներն իրենց քարոզութեան ընթացքում հիվանդներին բուժում էին աղոթքով և օծում յողով՝ «չաւնուն Տեաւն» (Մարկ. 2. 13, Յակ. Ե, 14):

Մեր եկեղեցու կյանքում ևս օծման յողով՝ «անուշահոտ յողն» կամ «յողն անուշահոտութեան», շատ մեծ տեղ է գրավում, որպէս և Հոգու շնորհների իրագործում, որպէս հավատքի, կյանքի անուշահոտութիւն: Այդ է պատճառը, որ արքայուս մեռնով օծվում է, «կնքվում» մկրտվողը, քահանան, եպիսկոպոսն ու կաթողիկոսը մեր մէջ, ինչպէս նաև անցյալում հայոց թագավորները:

Ըստ Ագաթանգեղոսի վկայության, և էջմիածնի Մայր տաճարի Ավագ սեղանի առաջ, բեմի վրա, առաջին անգամ դրվել է արքայուս մեռնի կաթսան, և առաջինը մեռն է օրհնել և Գրիգոր Լուսավորիչը. «Եւ իղն օծութեան, գոր արկանէր Գրիգոր ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկանքն խաղայր և քրիստոսեան դրոշման առ հասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն Հոգույն Սըրբով»:

Այնուհետև մեր եկեղեցական մատենագրութեան մէջ յողի օրհնութեան և գործածութեան մասին հնագույն երկրորդ վկայությունը գտնվում է և Սահակի սահմանած 55 կանոնների մէջ, որոնցից 20-րդ հրահանգում է. «Ամեն տարի, Չատկից հետո, մկրտութեան յողը որքան հարկավոր է, քահանաները բերեն մեզ և մեզինց ստանան օրհնած յողը: «Մկրտութեան յող» բացատրութեամբ հասկացվում է մեռն (Հայոց եկեղեցական իրավունք, Ա գիրք. Ծուշի, 1903, էջ 521—522):

Երրորդ վկայությունը գտնվում է Կորյունի մոտ: Ս. Սահակի վախճանման ստիթով «չերկրորդ ժամու աւորն ի պաշտաման անուշահոտ իղոյն հանդերձ աստուածահանոյ աղօթիք՝ ծերունոյն ի Քրիստոս աւանդել»:

Կորյունի այս վկայութեան մէջ ոմանք վերջին օծման մասին ակնարկություն են կարծում գտնել:

Մեռն բառը չկա Աստվածաշնչի մէջ: Մեռն, մյուտն կամ միտն բառը հունարեն է և նշանակում է անուշ ուղ, որը պետք է պատրաստվի ձիթեմու ձեթից կամ յողից:

Առաջին անգամ այդ բառին հանդիպում ենք Հովհան Օձնեցու մոտ, մեր եկեղեցական մատենագրութեան մէջ: 719 թվականին Դվինի Ե ժողովում սահմանված 32 կանոնների մէջ, 9-րդ հրահանգում է. «Պարտ և

արժան է զսուրբ միտնն այսինքն է զիղն անուշահոտութեան հարապետէն օրհնել» (Հայոց եկեղ. իրավունք, Ծուշի, 1903, էջ 412) և տարին մի անգամ, Չատկի Ավագ հինգշաբթի օրը բաշխել եպիսկոպոսներին և քահանաներին սեղան, եկեղեցի, խաչ օրհնելու և մկրտվածներին դրոշմելու համար:

Մեռնի պատրաստութեան հիմնական նյութերն են՝ ձեթ և բալասան:

Էջմիածնի Մայր Մաշտոցը, տպագրված 1890 թվականին, մեռնի պատրաստութեան համար հրահանգում է 45 տեսակ հոտավետ ծաղիկներ, որոնց անունները թվելուց հետո, պատվիրում. «Եւ եթէ նիթոցս մին և կամ երկու և երեք պակաս լիցի, մի՛ արգելցես գմեռնի օրհնելն»:

Մեռնի օրհնութեան համար անհրաժեշտ ծաղիկներ ենթարկվում են մասնավոր պատրաստութեան: Մայր Մաշտոցը հրահանգում է այդ նյութերը ծեծելուց և մաղելուց հետո, դնել փոքր կաթսայի մէջ, ավելացնել նաև «իղ ձիթեմույ և գինի» և ապա եփել, որպէսզի բուրումնավետ այդ նյութերի բուրմունքն ու անուշահոտությունը փոխանցվի յողին:

Ըստ Մաշտոցի հրահանգի, շաբաթներ առաջ պետք է պատրաստություններ տեսնել մեռնի օրհնութեան համար. «Նախ ժողովեցեն ծաղկունս, և եփեալ զնոսա... դիցեն ի արկաւագարանն և ի իղս ձիթեմույ ըստ բաւականին լցեալ յանօթս և ապա դիցեն ասագ խորանն քառասուն աւորք յառաջ և ծածկեցեն եօթն շղարշով»:

Մեռնի կաթսան սոնվազն քառասուն օր առաջ պետք է մնա Մայր տաճարում՝ Ավագ սեղանի բեմի առաջ. ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրեր տեղի ունենա Հսկումի արարողություն, աղոթքով ու սաղմոսերգությամբ: Մեռնը խորհրդանշն է, «օրհնակր» սուրբ Հոգու շնորհներին:

Նարեկացին նշում է, որ «բազում ծաղիկների բաղադրութեամբ պատրաստված խընկելի, պաշտելի և գովելի յողը ալևս պարզ օծում չէ գանգիս և ոչ էլ գլխիս մագերին օգուտ, եթէ տերունական քո խաչով տյառնագրված յիներ»:

Սարգիս Ծնորհային իր Կաթողիկեաց թղթի մեկնության մէջ գրում է. «Թող յողով օծեն հանուն Տիրոջ... որովհետև ո՛չ թէ յողն է առողջություն տալիս հիվանդին, այլ Տիրոջ անունը»:

Ըստ եկեղեցական հին կանոնների, մեռնօրհնությունը կատարվում էր Չատկի Ավագ Հինգշաբթին, և պատարագի ժամանակ:

Մեր էջմիածնի Մայր Մաշտոցը հրահանգում է «և յաւոր մեծի հինգշաբաթոջ, և կամ յաւոր Պենտեկոստէի և կամ յաւորս ինչ պատշաճաւորս»:

Շատ հավանաբար Մաշտոցում մեռնօրհներթի կանոնը կազմված է ԺԱ դարում և մինչև Տաթևացու օրերը ճոխացել և ամբողջականացվել:

Գրիգոր Տաթևացին, տաթևյան թափով և ընդգրկումով, շատ գեղեցիկ, հոգեշահ և կրոնարույր խորհրդածություններ է գրել այն մասին, «թե՛ զի՛նչ նշանակե՛ միտունին անոյշ հոտն» (Տե՛ս Գր. Տաթևացի, Զմերան հատոր, էջ 563—564բ):

Քրիստոնեական ոչ մի եկեղեցու կյանքում օրհնած լուրը այնքան մեծ, հոգևոր ու ազգային նշանակություն չի ունեցել, որքան սրբալույս մեռուը հայ ժողովրդի կյանքում:

Սրբալույս մեռուը ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև մեր օրերը մեր ազգային-եկեղեցական գիտակցության և զգացմունքների համար միշտ եղել է և է նաև մեր ժողովրդի հոգևոր միասնության և մեր եկեղեցու անքակտելի միության նվիրական խորհրդանշանը, հոգևոր ու լուսավոր շաղախը: Այս իսկ պատճառով մեր ժողովուրդը անապատ հավատով ու սրտառույ թարեպաշտությամբ ներկա է եղել մեռուի օրհնության, և մեռուի կաթսայի առաջ ծնրադրելիս հաղորդակցել է իր նախնիների հավատի, ջերմեռանդության և հայրենասիրության հետ:

Սրբալույս մեռուի կաթսան հայ հավատացյալ և հայրենասեր ժողովրդի մեռուաբույր, անուշահոտ սիրտն է, ուր հայ հավատքն ու հոգին, հայ կյանքն ու միտքը օրհնվում և շատանում են և իբր մասունք բաշխվում բոլոր ժամանակների հայության:

1969 թվականի հոկտեմբերի 5-ը կոչված է նոր ու պատմական իրադրություն հանդիսանալու մեր հոգևոր-եկեղեցական կյանքում:

1969 թվականի հոկտեմբերի 5-ին ս. Էջմիածնի կամարների տակ Լուսավորչի գահի արժանընտիր հաջորդը և հայոց աշխարհի

սիրելի Հայրապետը՝ Ն. Ա. Օծուբյուն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, սուրբ Լուսավորչի Աջով, իր աղոթքներով և օրհնությանը իր ծննդյան 60-ամյակի և գահակալության 14-րդ տարեդարձի առթիվ սրբալույս մեռու է օրհնելու՝ ի մխիթարություն մեր ժողովրդյան, մի անգամ ևս պայծառացնելով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, ուր նորից իջնելու է ս. Հոգին սրբալույս մեռուի օրհնության պահին, որպես նոր շնորհաբաշխություն. «Քում ամենիմաստ էություննդ խոստովանիմք զամենայն պարզև ի մեզ ծաղկեալ և անեցեալ, որ ձեռնադրես սուսբեալս, լցուցանես մարգարէս, ոսուցանես վարդապետս» (Նարեկացի):

Թող երբեք չպակասի սրբալույս մեռուը հայ ժողովրդի սրտից և սուրբ ձեթը՝ Լուսավորչի կանթեղից:

Հայ եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը 1969 թվականի հոկտեմբերի 5-ին երախտագետ սրտով և որդիական ակնածանքով կնշի իր սիրելի Հայրապետի ծննդյան 60-ամյակը և Նրա գահակալության 14-րդ տարեդարձը:

Հայոց Հայրապետը տասնչորս տարիներ շարունակ աղոթքով, հսկումով, ինքնամոռաց նվիրումով ու աշխատանքով նոր լույս է իջեցրել սուրբ Էջմիածնի հագարամյա քարերին ու հայ սրտերի վրա և իր սուրբ և արի ձեռքերում պահել այնքան հեղինակությամբ և բարի արդյունավորությամբ հայրապետական իշխանության գավազանը՝ հանսասանություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի պայծառություն հայ եկեղեցու և ի բարօրություն հայրենյաց:

Հայրապետական հոբելյանի առթիվ բովանդակ հայ ժողովրդի սրտագին աղոթքն է. «Տէր, լուսազարդ պայծառացո գաւազան իշխանութեան մերոյ հայրապետի, զի օրհնեցուք զքեզ, Տէր, այժմ և յաիտեան»:

